

Թիւ 24264
Փետր. 20, 1974

Արժանաշնորհ
Տ. Բարզէն Ա. Քհնյ. Մագսուտեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Պոսթոն.

Սիրելի Տէր Բարզէն,

Ստացած ենք Փետրուար 14, 1974 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 10ին գումարուած հա-
մայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝
կը խնդրէք ընտրուած անձերու վախերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմա-
կան Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Հանեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորըն-
տիր Գիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Կրէկորի Թաշճեան
Րապրթ Բրուտեան
Ճան Ժամկոչեան
Ճերի Օտապաշեան
Գրիգոր Գասապեան